Արձանագրություն N 2-2
ՀՀԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/2 ծածկագրով <<համակարգիչ ամբողջը մեկում>> և <<բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային>> ապրանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 11.09.2023թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Բարսեղյան
Մ. Արշալույսյան
Ա. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան
Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Գ. Խաչատրյան

1. Առաջին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Առաջին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Արթուր Հարությունյան Սերյոժայի ԱՁ-ի հայտի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը՝

1. **Դիմում-հայտարարության մասով՝**

Ներկայացված երկու դիմում-հայտարարություններից մի տարբերակում ճիշտ չէ նշված Պատվիրատուի անվանումը, իսկ մյուս տարբերակը բովանդակությամբ տարբերվում է հրավերի օրինակելի ձևից:

2. **Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մասով՝**

- Տեխնիկական բնութագիրը հստակ չի նկարագրված (մասնավորապես՝ առնվազն, պետք է, բառերը և հրավերի բնութագրում նշված պարտադիր պայմանները անհրաժեշտ է հստակեցնել):
- Նշված չէ սպասարկման կենտրոնի հասցեն:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել Արթուր Հարությունյան Սերյոժայի ԱՁ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 12.09.2023թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում eauction.armeps.am համակարգի միջոցով շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 13.09.2023թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Հանձնաժողովի Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամներ՝ ---------- Կ. Բարսեղյան

---------- Մ. Արշալույսյան

---------- Ա. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան